ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԽԱՉԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

Ժողովրդավարության համախմբման գործընթացի արդյունավետության և ռեդուկցիայի վրա անմիջականորեն ազդող փոփոխականների (պարամետրերի) շարքում շատ անցումագետներ մատնանշում են մշակութային գործոնների կարևորությունն ու առանցքային դերը: Թե ինչքան երկար կարող են տևել քաղաքական համակարգերի փոխակերպումները, որքանով ներդրված ժողովրդավարական հաստատությունները կհարմարվեն քաղաքական նոր իրողություններին, ընկալելի և ընդունելի կլինեն հասարակության մեծամասնության ու հիմնական քաղաքական բոլոր դերակատարների համար, թե ինչպես դրանք կգործարկվեն իրականում և լեգիտիմության ինչ աստիճան կապահովեն գործող իշխանությունների համար, ուղղակիորեն պայմանավորված են տվյալ հասարակությանը բնորոշ՝ անցյալից ժառանգած քաղաքական ավանդույթներով ու հատկապես նոր ձևավորվող ժողովրդավարական քաղաքական մշակույթի գործառության առանձնահատկություններով: Չէ՞ որ ժողովրդավարության համախմբման հիմնական «գլխացավանք» համարվող և՛ համատեքստային, և՛ վարքագծային, և՛ արժեքային, և՛ ինստիտուցիոնալ հիմնախնդիրները ուղղակիորեն առնչվում են հասարակության քաղաքական մշակույթի ենթաշերտին, որը տարբեր հեղինակներ տարբեր կերպ են բնորոշում: Օրինակ՝ Լ. Դայմոնդը նշում է. «Ըստ էության, ժողովրդավարության համախմբումը լեգիտիմացման այնքան լայն և խորը գործընթաց է, որի ժամանակ բոլոր քաղաքական դերակատարները և՛ էլիտայի, և՝ հասարակության լայն շերտերի մակարդակներում հավատում են, որ ժողովրդավարական համակարգը լավագույնն է իրենց հասարակության համար, քան բոլոր այն իրատեսական այլընտրանքները, որոնք երբևէ կարող են երևակայել»[1]: Ընդ որում, ինչպես նշում է հեղինակը, նման լեգիտիմության դեպքում խոսքը ոչ միայն համակարգի նկատմամբ ինչ-որ վերացական վստահության, այլև որոշակի նորմատիվային պարտավորությունների և վարքագծային կառուցվածքների մասին է: Իսկ այդ գործընթացում արդեն առանցքային են դառնում քաղաքական մշակույթի փոփոխականները, որոնք ենթադրում են ժողովրդավարության «ինստրումենտալ» ընկալումնե-

[1] **Diamond L.** Is the Third Wave over? //Journal of Democracy, 1996, vol. 7, № 3, p. 33.

րից անցում դեպի «սկզբունքային» կողմնորոշումներ, որտեղ ժողովրդավարությունը արդեն վերածվում է բարձրագույն արժեքի:

Այս դեպքում խոսքը քաղաքականության վրա մշակութային գործոնի ազդեցության կամ ավելի ճիշտ՝ քաղաքական մշակույթի տեսության մասին է: Այստեղ ընդգծվում է, որ, ի տարբերություն ժողովրդավարացման տնտեսագիտական տեսությունների (որոնք փորձում են ժողովրդավարական գործընթացների արդյունավետությունը բացատրել տնտեսական պայմաններով), ժողովրդավարական անցումների հիմքում ընկած են հասարակության մեծամասնության կողմից ընդունվող քաղաքական նորմերը, վարքագծի կանոնները, «մշակույթի քաղաքակրթական շերտը»[2], «դիսկուրսի էթիկան»[3], «ժողովրդավարական քաղաքական մշակույթը»[4], «քաղաքացիական մշակույթը»[5], որոնց կրողներին հատուկ են փոխադարձ վստահության բարձր մակարդակը, փոխզիջումների պատրաստակամությունը, ինչպես նաև հանդուրժողականությունը իրարից տարբերվող կամ նույնիսկ հակասական շահերի և դիրքորոշումների նկատմամբ[6]:

Անցումագիտության շրջանակներում ժողովրդավարության համախմբման գործում մշակութային գործոնի դերին շատ հեղինակներ են անդրադառնում՝ այդ երևույթին տարբեր իմաստ և բովանդակություն վերագրելով:

Օրինակ՝ Հանթինգտոնը, խոսելով ժողովրդավարական քաղաքական մշակույթի մասին, նշում է, որ այդ թեման ուշադրության կենտրոնում է պահում նոր ժողովրդավարական կառավարությունների արդյունավետության ու լեգիտիմության փոխադարձ կապի հարցը, այսինքն՝ թե քաղաքական էլիտայի և հասարակության հավատն ինչ աստիճանի է ժողովրդավարական համակարգի՝ որպես բարձրագույն արժեքի նկատմամբ[7]: Նոր ժողովրդավարությունները, ըստ Հանթինգտոնի, հայտնվում են կախարդական շրջանի մեջ. առանց լեգիտիմության նրանք չեն կարող արդյունավետ լինել, իսկ առանց արդյունավե-

---

[2] Այս հասկացությունը շրջանառության մեջ է դրել ակադեմիկոս Հ. Գևորգյանը՝ նշելով, որ հասարակության պետաիրավական (քաղաքական) կազմակերպման համընդհանրական ձևերի շնորհիվ կազմավորվում է մշակույթի վերին՝ քաղաքակրթական շերտը: Հեղինակը կարծում է, որ եթե բացակայում են պատմականորեն գոյացած՝ մշակույթի քաղաքակրթական ձևերը և էլիտար մշակույթը, ապա այդպիսի երկրներում գոյանում են պետություններ՝ հենված ուժի վրա, որոնց բնորոշ են միջէթնիկական, միջցեղային կամ կլանային անվերջ հակամարտություններն ու կռիվները: Տե՛ս **Հ. Գևորգյան,** Ազգ, ազգային պետություն, ազգային մշակույթ, Եր., 1997, էջ 55-56:

[3] Տե՛ս **Хабермас Ю.** Моральное сознание и коллективное действие. СПб., 2001, **Хабермас Ю.** Вовлечение другого. Очерки политической теории. СПб., 2001.

[4] Տե՛ս **Хантингтон С**. Третья волна. Демократизация в конце XX века. М., 2003, էջ 278-285:

[5] Տե՛ս **Алмонд Г., Верба С.** Гражданская культура: политические установки и демократия в пяти странах. М., 2014, էջ 445-492:

[6] Տե՛ս **Цыганков А.** Современные политические режимы: структура, типология, динамика. М., 1995, էջ 212:

[7] Տե՛ս **Хантингтон С**., նշվ. աշխ., էջ 278:

տության էլ չեն կարող լեգիտիմություն ձեռք բերել[8]: Հետևաբար, ժողովրդավարական համակարգերի համախմբումը, ինչպես իրավացիորեն նշում է Հանթինգտոնը, կախված է ոչ թե համատեքստային կամ այլ կարգի խնդիրների սրությունից, այլ այն բանից, թե հիմնական քաղաքական էլիտայի ներկայացուցիչները՝ կուսակցական, ռազմական, գործարար շրջանակների առաջնորդները, որքանով են ունակ աշխատելու միասին, համատեղ ուժերով լուծելու իրենց հասարակությունների առջև ծառացած հիմնախնդիրները: Եվ երկրորդ. որքան էլ քաղաքական, սոցիալ-տնտեսական խնդիրները սուր դրված լինեն տվյալ պետության առջև, այնուամենայնիվ քաղաքական դաշտի ոչ մի խոշոր դերակատար կասկածի տակ չի դնում ժողովրդավարության գոյությունը և չի քննարկում ոչ ժողովրդավարական մեթոդներով քաղաքական պայքարի հնարավորությունը: Հենց դա էլ Հանթինգտոնը համարում է ժողովրդավարական քաղաքական մշակույթ:

Գ. Ալմոնդը և Ս. Վերբան նույնպես ժողովրդավարության կայունության վերաբերյալ հանդես են գալիս հարցադրմամբ. արդյո՞ք գոյություն ունի ժողովրդավարական քաղաքական մշակույթ, այսինքն՝ ժողովրդավարական քաղաքական համակարգին բնորոշ քաղաքական դիրքորոշումների որոշակի տիպ: Այս հարցին պատասխանելիս՝ հեղինակներն առաջ են քաշում «քաղաքացիական մշակույթի» գաղափարը, որը համարում են քաղաքական մշակույթի յուրօրինակ խառնուրդ. այն ներառում է և՛ մասնակցային, և՛ հպատակային, և՛ փարոքիալ քաղաքական մշակույթի տարրեր[9]: Դրա շրջանակներում շատ քաղաքացիներ կարող են հանդես գալ ինչպես քաղաքական ակտիվ դիրքորոշումներով, այնպես էլ ավելի կրավորական վարքագիծ դրսևորել: Նույնիսկ այն դեպքում, համաձայն հեղինակների, երբ մարդ հանդես է գալիս քաղաքական ակտիվ դիրքերից, շարունակում է պահպանել իր ավանդական, ոչ քաղաքական կապերը, ինչպես նաև մնում է ենթարկվողական քաղաքական մշակույթին բնորոշ կաղապարի մեջ:

Ամերիկյան հեղինակները շատ ճիշտ են նկատում, որ ժողովրդավարական համակարգի գործառության համար միայն ինստիտուտների առկայությունը բավարար չէ, ինչպես օրինակ՝ նույն ամբողջատիրական համակարգերում ևս առկա են սահմանադրության ինստիտուտը, ընտրական ընթացակարգեր, մարդու իրավունքների հռչակագրային դրույթներ, որոնք, սակայն, ամենևին չեն երաշխավորում համակարգի ժողովրդավարական բնույթը: Հետևաբար, քաղաքացիական մշակույթն է, որ ժողովրդավարության գաղափարին «միս» ու «արյուն» է տալիս, դրա միջոցով է, որ մարդիկ ճիշտ՝ իսկական ժողովրդավարությանը հարիր են աշխատեցնում ժողովրդավարական ինստիտուտները: Իսկ դրա համար նախևառաջ հարկավոր է սոցիալական վստա-

[8] Տե՛ս նույն տեղը:
[9] Տե՛ս **Алмонд Г., Верба С.,** նշվ. աշխ., էջ 51:

հության և համագործակցության բավարար մակարդակ: Այս գործոնների դերակատարումը անհնար է թերագնահատել քաղաքացիական մշակույթի բաղադրատարրերի շարքում: Գ. Ալմոնդի և Ս. Վերբայի կարծիքով՝ սոցիալական վստահության (լեգիտիմության) և համագործակցության (երկխոսության) գործոնները այն հիմնական շտեմարանն են, որտեղից ժողովրդավարական կառավարման համակարգը քաղում է գործառելու իր ունակությունը[10]: Դրանք փոխպայմանավորված են: Սոցիալական վստահությունը նպաստում է քաղաքական համագործակցությանը, իսկ առանց դրա խոսել ժողովրդավարական կառավարման մասին ուղղակի անհնար է: Փաստորեն, նոր ժողովրդավարություններին բնորոշ հանթինգտոնյան «կախարդական շրջանը», ըստ Ալմոնդի և Վերբայի, հնարավոր է հաղթահարել սոցիալական վստահության և համագործակցության շնորհիվ: Այստեղ առաջանում է ևս մեկ խնդիր, որին ժողովրդավարական համակարգերը պետք է դիմակայեն. խոսքը համաձայնության և տարաձայնության միջև հավասարակշռության պահպանման մասին է: Պարսոնսի բնութագրմամբ՝ հասարակության մեջ պետք է լինի «սահմանափակ բևեռացում»[11]: Եթե նվազագույն համաձայնությունը բացակայում է, քիչ է հավանականությունը, որ ծագած հակասություններն ու կոնֆլիկտները հնարավոր է լուծել խաղաղ ճանապարհով:

Ըստ Գ. Ալմոնդի և Ս. Վերբայի՝ քաղաքացիական մշակույթի շրջանակներում համաձայնության և տարաձայնության հավասարակշռությունը պահպանվում է նորմերի ու վարքագծի միջև անհամապատասխանության օգնությամբ, ինչպես օրինակ՝ քաղաքացու ակտիվության և կրավորականության միջև հավասարակշռության դեպքում[12]: Դա ճանապարհներից մեկն է, որի օգնությամբ քաղաքացիական մշակույթը «սանձահարում է» հասարակության մեջ առաջացած տարաձայնությունները: Որպես կանոն՝ քաղաքականության մակարդակում ծագած կոնֆլիկտները կարծես թե ենթարկվում են միասնականության և համախմբվածության ավելի բարձր՝ համընդգրկուն կողմնորոշումներին, այսինքն՝ ժողովրդավարական խաղի կանոնները ավելի վեհ ու բարձր արժեքներ են, քան քաղաքական էլիտայի եսապաշտական ու կուսակցական շահերը: Ընդ որում, համաձայնության և տարաձայնության հավասարակշռությունը պետք է պահպանվի ոչ միայն քաղաքացիների, այլև քաղաքական էլիտայի մակարդակում: Էլիտաները նույնպես պետք է գիտակցեն, որ ժողովրդավարական խաղի կանոններին հավատարմությունը ավելի կարևոր և բարձր արժեք է, քան այսրոպեական քաղաքական շահերը սպասարկելը:

---

[10] Տե՛ս նույն տեղը, էջ 53:

[11] Հղումն ըստ՝ «Политология: Хрестоматия» (сост. Исаев Б., Тургаев А., Хренов А.), СПб., 2006, էջ 280:

[12] Տե՛ս **Алмонд Г., Верба С.,** նշվ. աշխ., էջ 59:

Այսպիսով, Ալմոնդը և Վերբան միանշանակորեն պնդում են, որ ժողովրդավարական քաղաքական համակարգին առավել բնորոշ է քաղաքացիական մշակույթը՝ միաժամանակ ընդունելով, որ այն ժողովրդավարական քաղաքական մշակույթի միակ տարատեսակը չէ, սակայն լավագույնս է համապատասխանում կայուն ժողովրդավարություններին: Սրանից կարելի է հետևություն անել, որ ժողովրդավարական քաղաքական մշակույթն ավելի ընդգրկուն երևույթ է, քանի որ ներառում է քաղաքացիական մշակույթը: Վերջինս այդ հարաբերություններում ժողովրդավարական քաղաքական մշակույթի դրսևորման միայն մի կողմն է: Քաղաքացիական մշակույթը նույնպես կարող է ունենալ մի քանի դրսևորումներ: Օրինակ՝այս համատեքստում երկխոսության մշակույթը լիովին կարելի է համարել քաղաքացիական մշակույթի դրսևորման մասնավոր դեպք: Այդպիսի եզրակացության կարելի է հանգել հիմք ընդունելով և՛ ժողովրդավարական քաղաքական մշակույթի, և՛ քաղաքացիականին բնորոշ քաղաքական համակարգի շրջանակներում առաջացած խնդիրներն ու հակասությունները համատեղ լուծելու ունակության և համագործակցության բարձր մակարդակի առկայության գործոնները: Դրանք երկուսն էլ երկխոսության մշակույթի անքակտելի մասն են: Հետևաբար, եթե ավելի որոշակիացնենք ժողովրդավարության համախմբման գործում մշակութային ենթաշերտի ազդեցության հարցը, ապա կբացահայտենք երկխոսության մշակույթի գործոնը որպես ժողովրդավարության համախմբման կարևոր նախապայման: Այդ տեսանկյունից եթե հարցին մոտենանք, ապա երկխոսության մշակույթին բովանդակային առումով մոտ է Հաբերմասի առաջ քաշած «դիսկուրսի էթիկա» եզրույթը, որը նույնպես կարելի է դիտարկել որպես քաղաքացիական մշակույթի դրսևորման մասնավոր դեպք: Մասնավորապես, Յ. Հաբերմասն իր «հաղորդակցական գործողության» տեսության մեջ նշում է, որ հաղորդակցական գործողությունը սուբյեկտների իրավահավասար մասնակցությունն է դիսկուրսին՝ հիմնված համագործակցության և շահերի համաձայնեցման վրա: Նման հաղորդակցումը իր հերթին հնարավոր է երկխոսության ռեժիմի և բանակցությունների շնորհիվ, որի հիմքում ընկած է լիակատար համաձայնության հասնելու սկզբունքը: Իսկ այն պայմանների ամբողջությունը, որոնց միջոցով ապահովվում է հաղորդակցական համաձայնությունը, Հաբերմասն անվանում է «դիսկուրսի էթիկա»[13]: Վերջինս իր բովանդակությամբ թերևս ամենամոտն է «երկխոսության մշակույթ» եզրույթին, այդ իսկ պատճառով պատահական չէ, որ Ա. Զայցևը հաբերմասյան «հաղորդակցական գործողության» ողջ հայեցակարգն անվանում է դիալոգիկա, իսկ խորհրդակցական (դելիբերատիվ) ժողովրդավարության մոդելը՝ երկխոսութային քաղաքականության իրա-

[13] Տե՛ս **Зайцев А**. Юрген Хабермас и его диалогика: понятие и сущность // Вестник КГУ, 2012/5, էջ 190:

կանացման պրակտիկ արտացոլում՝ հենված ոչ թե համոզման ուժի կամ շուկայական պրագմատիզմի ու տնտեսական հաշվենկատության, այլ երկխոսության հարացույցի վրա, որի հիմքն են արդեն փոխըմբռնման ու բոլոր կողմերի քաղաքական հավակնությունների ընդունման սկզբունքները[14]:

Ընդհանրապես պետք է նշել, որ Հաբերմասը բավականին քննադատորեն է մոտենում ազատական ժողովրդավարության մոդելին, և դա պատահական չէ, քանի որ նա համարվում է ժամանակակից գերմանական սոցիալ-դեմոկրատիայի կարկառուն ներկայացուցիչը և գաղափարական հենասյուներից մեկը: Այս տեսանկյունից դելիբերատիվ ժողովրդավարության հիմնական իմաստը շատ դիպուկ է բնութագրել Շ. Մուֆը. «Դելիբերատիվ ժողովրդավարության հիմնական թեզն այն է, որ համապատասխան ընթացակարգերի օգնությամբ հնարավոր է հասնել այնպիսի համաձայնության, որը կհամապատասխանի ինչպես ռացիոնալության (որն ընկալվում է որպես լիբերալ իրավունքների պաշտպանություն), այնպես էլ ժողովրդավարական լեգիտիմության (որը ներկայանում է ժողովրդի ինքնիշխանության սկզբունքով) պահանջներին»[15]: Ս. Պոցելուևը նույնպես գտնում է, որ «Հաբերմասը խորհրդակցական ժողովրդավարության տեսությունը կառուցում է որպես «ոսկե ճանապարհ» ժողովրդավարության ազատական ու պահպանողական մոդելների ծայրահեղ դրսևորումների միջև»[16]: Սա արդեն դասական սոցիալ-դեմոկրատական մոտեցում է, որը փորձում է հարթել հասարակության մեջ առկա գաղափարական սուր հակասությունները, գտնել քաղաքական, տնտեսական և սոցիալական համակեցության փոխզիջումային և ընդունելի մոդելներ: Այս լույսի ներքո Հաբերմասի խորհրդակցական ժողովրդավարության մոդելը կարելի է դիտել որպես ժողովրդավարության համախմբման ազատական հայեցակարգի սոցիալ-դեմոկրատական պատասխանը: Փաստորեն, գերմանացի մտածողի դելիբերատիվ ժողովրդավարության տեսությունն առանձնահատուկ հաղորդակցական կացութաձևի տիպօրինակ է՝ բնորոշ այն քաղաքացիական հասարակություններին, որտեղ բոլոր հարցերը լուծվում են հրապարակային քննարկումների ու երկխոսությունների ճանապարհով՝ ապահովելով հասարակական համերաշխություն և համաձայնություն: Պատահական չէ, որ Հաբերմասը ժամանակակից ժողովրդավարության բուժման «դեղատոմս» է համարում այն քաղաքական վարչակարգը, որը հենվում է ոչ թե քաղաքացիների լոկ մասնակցության (որը ազատական ժողովրդավարական մոդելի հիմքն է), այլ հասարակության բոլոր խավերն ու մակարդակներն ընդգրկող հան-

---

[14] Տե՛ս նույն տեղը, էջ 191:

[15] **Муфф Ш.** К агонистической модели демократии // Логос, 2004/2(42), с. 183.

[16] **Поцелуев С.** Диалог и квазидиалог в коммуникативных теориях демократии. Ростов-на-Дону, 2010, с. 270.

բային երկխոսությունների ցանցին փաստացի և շարունակական մասնակցության վրա[17]: Ինչպես Վ. Շուլցն է նշում, Հաբերմասը խորհրդակցական ժողովրդավարության համատեքստում քաղաքականության՝ քաղաքացիական ինքնորոշման պրակտիկայի իմաստով հիմնական հարացույց է համարում ոչ թե շուկան, այլ երկխոսությունը[18]: Թեպետ խորհրդակցական ժողովրդավարության հիմնադրույթների կառուցողական քննադատները գտնում են, որ, ի տարբերություն երիտասարդ Հաբերմասի, ավելի հասուն տարիքում նրա աշխատանքներում խորհրդակցական ժողովրդավարության հայեցակարգը կորցնում է հենց այդ երկխոսութային բնույթը, որի պատճառով «երկխոսություն» կատեգորիան գերմանացի մտածողի գործերում զրկվում է առանցքային մեթոդաբանական նշանակությունից[19]: Ս. Պոցելուևը նշում է, որ Հաբերմասը երկխոսութային դիսկուրսին, որը միտված է ընդհանուր բարիքի շուրջ համաձայնության ձևավորմանը, հակադրում է քաղաքական խնդիրների քննարկումը կամ դելիբերացիան, որն ավելի շատ ենթադրում է շահերի փոխզիջում՝ բացառելով համաձայնության հնարավորությունը[20]: Այդ իմաստով երկխոսությունը, որը ենթադրում է ընդհանուր բարիքի շուրջ փոխհամաձայնության ձևավորում, ըստ Հաբերմասի, չեզոքացնում է բոլոր տեսակի իշխանական դրսևորումները, որից էլ հետևում է, որ իշխանությունն ու երկխոսությունը անհամատեղելի են: Մի քիչ անհասկանալի մոտեցում է, քանի որ, ըստ էության, Հաբերմասի օգտագործած «դելիբերացիա» հասկացությունն իր կիրառական նշանակությամբ ավելի մոտ է երկխոսության բովանդակությանը: Ս. Պոցելուևը շատ հետաքրքիր ձևով է ներկայացնում Հաբերմասի այդ հայեցակարգային երկվությունը՝ նշելով, որ երկխոսության փիլիսոփայական-էթիկական տարբերակը (հանրապետական իդեալիզմի տեսքով) դռնից դուրս հրելով՝ Հաբերմասն այն ներս է թողնում պատուհանից՝ արդեն «դիսկուրսի էթիկայի» տեսքով[21]: Հետևաբար, եթե Հաբերմասի գործերում դիսկուրսը նույն երկխոսությունն է, որը միտված է վիճահարույց նկրտումների շուրջ համաձայնության հասնելուն, ապա «դիսկուրսի էթիկան» էլ մեծ հաշվով հենց երկխոսության էթիկան է, կամ ավելի ճիշտ՝ երկխոսության մշակույթը: Այդ իսկ պատճառով ավելի նպատակահարմար է շրջանառության մեջ դնել «երկխոսության մշակույթ» եզրույթը և ժողովրդավարության համախմբման համատեքստում քննարկել հենց երկխոսության մշակույթի ազդեցությունն ու դերակատարումը: Չէ՞ որ նույն Հաբերմասը նշում է, որ դիսկուրս են

---

[17] Տե՛ս նույն տեղը, էջ 272:

[18] Տե՛ս **Шульц В.** Критика «диалогики» Ю. Хабермаса // Материалистическая диалектика. Т. 5, М., 1985, էջ 388:

[19] Տե՛ս **Поцелуев С.,** նշվ. աշխ., էջ 310:

[20] Տե՛ս նույն տեղը:

[21] Տե՛ս նույն տեղը, էջ 312:

համարվում ոչ թե բոլոր երկխոսությունները, այլ միայն որոշակի հասունության հասածները, և այն անվանում է «Mündigkeit»* եզրույթով[22]: Դիսկուրս-երկխոսությունների համար առաջ քաշելով հասունության որոշակի աստիճանի պահանջը՝ փաստորեն կարևորվում է հասարակության սոցիալական կյանքում և քաղաքական պրակտիկայում երկխոսության մշակույթի առկայությունը, ինչին չի կարելի չհամաձայնվել:

Այսպիսով, ի՞նչ է «երկխոսության մշակույթը», և ի՞նչ դերակատարում այն կարող է ունենալ ժողովրդավարության համախմբման գործում: «Երկխոսության մշակույթը» նախևառաջ պետք է դիտարկել իմաստային և բովանդակային լայն ու նեղ կիրառման համատեքստում: Լայն առումով երկխոսության մշակույթը հակամարտությունների և վիճահարույց հարցերի խաղաղ կարգավորմանը միտված, հասարակության մեջ արմատավորված ավանդույթների և սովորույթների համակարգն է, իսկ նեղ առումով այն կարող է օգտագործվել ավելի գործնական հարթությունում՝ մատնանշելով հասարակական-քաղաքական դիսկուրս-երկխոսություններին մասնակցության կուլտուրան (էթիկայի իմաստով), բանակցություններ վարելու արդյունավետ միջոցների և հնարների կիրառման գործնական հմտություններն ու ընդունակությունները:

Երբ խոսքը հասարակության մեջ ձևավորված հակամարտությունների և վիճահարույց հարցերի խաղաղ կարգավորման ավանդույթների և սովորույթների մասին է, ապա պետք է նշել, որ տարբեր հասարակություններում կոնֆլիկտայնության աստիճանն ու վիճահարույց հարցերի լուծման մեթոդները տարբեր են:

Կան հասարակություններ, որոնց բնորոշ է կոնֆլիկտայնության բարձր աստիճան, որտեղ հարցերի լուծման ուժային տարբերակների նախապատվությունն «արյան մեջ է» ու սերնդից սերունդ փոխանցվող «բացարձակ ճշմարտություն» է, և այդ բոլորը մարդկանց առօրյա կենսակերպի մասն են: Նման բևեռացված հասարակություններում, բնականաբար, երկխոսություններն ու բանակցությունները դիտվում են որպես «թուլության նշան», որպես ընդհանուր կանոններից շեղում և լայն տարածում չունեն հասարակական-քաղաքական պրակտիկայում:

Իսկ այն հասարակությունները, որտեղ գերակայում են կոնֆլիկտների խաղաղ լուծման պրակտիկաները, համաձայնության և հանդուրժողականության արժեքները, բնականաբար, ավելի մոտ են կանգնած ժողովրդավարական արժեքներին: Երկխոսության մշակույթը ժողովրդավարական քաղաքական ու քաղաքացիական մշակույթի անքակտելի

---

* Գերմաներեն «Mündigkeit» հասկացությունը բառացի թարգմանվում է «չափահասություն»: Տե՛ս [https://hy.glosbe.com/de/hy/Mündigkeit]

[22] Տե՛ս **Зайцев А.**, նշվ. աշխ., էջ 194:

մասն է, որի առկայության դեպքում ժողովրդավարության համախմբման արագությունը, արդյունավետությունն ու որակը լրիվ ուրիշ բովանդակություն են ստանում:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ժողովրդավարության համախմբման փուլի հաջող հաղթահարման գործում քաղաքական երկխոսության մշակույթը վճռորոշ դեր ունի: Դեռ ավելին՝ երկխոսության մշակույթի ձևավորումը պետք է համարել ժողովրդավարության համախմբման կարևոր նախապայման: Բանն այն է, որ ժողովրդավարությանն անցման տեսանկյունից համախմբման փուլը հնարավոր է հաղթահարել, եթե քաղաքական դաշտի բոլոր հիմնական դերակատարների միջև հաստատված է նվազագույն համաձայնություն ինչպես քաղաքական ինստիտուտների գործառության, այնպես էլ ժողովրդավարական խաղի կանոնների և վարքագծի համընդհանուր ճանաչում գտած նորմերի հարցում: Իսկ նման համաձայնությունների հնարավոր է հասնել քաղաքական դաշտի սահմանափակ բևեռացվածության պարագայում, հասարակական-քաղաքական ուժերի միջև երկխոսության պատրաստակամության դեպքում, որոնք էապես սահմանափակում են կողմերի միակողմանի գործողությունների հնարավորությունը և թույլ չեն տալիս «այրել կամուրջները», այլ ընդհակառակը՝ քաղաքական դաշտի հիմնական դերակատարներին պահում են քաղաքակիրթ երկխոսության տիրույթում՝ նախապատվությունը տալով առաջացած հակասությունների ու կոնֆլիկտների լուծման բացառապես խաղաղ եղանակներին, կիրառելով հասարակական-քաղաքական լայն դիսկուրս-երկխոսություններ նախաձեռնելու և բանակցություններ վարելու պրակտիկաները:

Քաղաքական երկխոսության մշակույթի ձևավորումը և հասարակական-քաղաքական կյանքում լայնորեն կիրառումը հատկապես կարևորվում են հայաստանյան քաղաքական իրողությունների պայմաններում: ՀՀ քաղաքական համակարգը գտնվում է ժողովրդավարության համախմբման փուլում, ուստի այդ գործընթացի սահուն ու արդյունավետ իրացումը մեծապես կախված է հենց քաղաքական երկխոսության՝ որպես համախմբված ժողովրդավարության կարևոր նախապայմանի մշակույթից:

Բանալի բառեր – *քաղաքական երկխոսության մշակույթ, ժողովրդավարության համախմբում, ժողովրդավարական քաղաքական մշակույթ, քաղաքացիական մշակույթ, քաղաքական համակարգ*

ХАЧИК ГАЛСТЯН – *Культура политического диалога в контексте консолидации демократии.* – Статья посвящена анализу культорологических факторов консолидации демократии. Предметом исследования становятся такие понятия, как «демократическая политическая культура», «гражданская культура», «этика дискурса» и «культура политического диалога». В контексте успешнего преодоления стадии консолидации демократии отмечается, что между ключевыми

игроками политического ландшафта необходим минимальный консенсус. Он касается функционирования политических институтов, а также общепризнанных норм поведения и правил игры. Такие соглашения могут быть достигнуты только в случае ограниченной поляризации политической системы. Если наличествует «диалогическая притягательность» между основными общественно-политическими силами, существенно ограничиваются их односторонние действия и повышается вероятность формирования культуры политического диалога – важного фактора консолидации демократии.

Ключевые слова: *культура политического диалога, консолидация демократии, диалогическая притягательность, демократическая политическая культура, политическая система*

KHACHIK GALSTYAN – *A Culture of Political Dialogue in the Context of the Consolidation of Democracy.* – The article is devoted to the analysis of culturological factors in the study of the consolidation of democracy. Within the framework of the article, the main subjects of research are such concepts as “democratic political culture”, “civic culture”, “ethics of discourse” and “culture of political dialogue”. In the context of the final transition and the successful overcoming of the stage of consolidation of democracy, the author notes that there should be a minimal consensus between all the key players in the political landscape regarding the functioning of political institutions, as well as generally accepted norms of behavior and rules of a democratic political game. And such agreements can be reached only in the case of a limited polarization of the political system. In this case, if there is a certain “dialogical gravitation” between the main socio-political actors, their unilateral actions are significantly limited, while simultaneously increasing the likelihood of formation of the culture of political dialogue, as an important factor in the process of consolidation of democracy.

Key worlds: *culture of political dialogue, consolidation of democracy, dialogical gravitation, democratic political culture, political system*

Ներկայացվել է՝ 06.02.2020, Գրախոսվել է՝ 20.02.2020, Ընդունվել է տպագրության՝ 25.05.2020